



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9513

638.2

U-33

1891

2011

38.2

Q-33

Համագործակցություն
Կապույտ


ՀԱՄԱՌՈՏ ԶԵՌՆԱՐԿ

ԿԱՆՈՆԱԻՐ

ԺԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍ. Ի. ԱԼՈՒԶԻ

Ներամասնական Մարտիֆայում, Կորսիկայում (Ֆրանսիայում)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մոսկովյան Կոմիտեի

Типография М. Вартамянца, Гановская д. № 3

1891

2002

630
20-ԱԼ

W 1411

638.2
Կ-33

Հ. Բ. Կ. Կ.

ՀԱՄԱՌՈՏ ԶԵՌՆԱՐԿ պ

66
838
7-26

ԿԱՆՈՆԱԻՐ

ԺԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ

60901



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանի

Типография М. Вартанянца, Гановская ул. д. № 3

1891

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Դեռ շատ վաղ ժամանակից եկել են
այն համոզման, որ պետք է ծանօթ լի-
նել այն միջոցներին, որոնք անհրաժեշտ
են կանոնաւոր շերամապահութեան հա-
մար:

Այդ իսկ պատճառով՝ ներկայ հրա-
տարակութեամբ մենք կամենում ենք
բացատրել այն դիտողութիւնները, որ
մենք արել ենք ըստ չափու կարողու-
թեան մեր երկարատե փորձերից և շատ
անգամ Եւրոպայի և Ասիայի շերամա-
պահական երկիրներն այցելելուց:

Կարծում ենք որ շերամապահներն
այս ձեռնարկիս մէջ կը գտնեն այնպիսի
խորհուրդներ, որոնք օգուտ կարող էին
բերել իրանց:

Дозволено Цензурою. Тифлисъ, 1-го Ноября 1891 г.

տարուի, որ փոշի չնստի վրան ու պահել մի առան-
ձին սենեակի մէջ, որի օդի տաքութեան աստիճանը
Յելսիուսի ջերմաչափով 8° -ից բարձր չէ լինում:

ՇԵՐԱՄԱՏԱՆ ՕԴԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆՐԱՆՈՒՄ ԳՏՆՈՒԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ.

Այն կացարանը, որի մէջ պիտի պահուի շե-
րամի որդերը, պէտք է շատ խտակ ու մաքուր լինի:

Նախ քան սերմի կենդանանալը շերամատան
մէջ եղած բոլոր եղած-չեղածը պէտք է լաւ լուա-
նալ հետեւեալ խառնուրդով՝ $2\frac{1}{2}$ դոյլ—վեդրօ տաք
ջրի հետ խառնել 5 գրվանքայ պղնձի արջասպ, վրան
էլ աւելացնել մի քիչ կիր:

Վեց մսխալ սերմ պահելու համար շերամա-
տան ընդարձակութիւնը պիտի 89 քառակուսի ար-
շին լինի:

ՍԵՐՄԻ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ (ձուից դուրս գալը):

Որպէսզի սերմը շուտով կենդանանայ, հարկա-
ւոր է հետեւեալ կերպով վարուել.

Ձուից դուրս գալուց մի տասն օր առաջ սերմը
պիտի տանել մի տաք սենեակ եւ ամեն օր կամա-

ցուկ խառնել ու շուռ ու մուռ տալ: Երբ սկսի
գոյնը փոխուել, հարկաւոր է բարակ շերտով փռել
սերմը թղթէ տփիկի յատակի վերայ եւ դնել կա-
փարիչ—խուսի ունեցող արկղում: սերմը դրած արկ-
ղում պէտք է դնել նաեւ մի ջերմաչափ, որպէսզի
կարելի լինի տաքութեան աստիճանն իմանալ:

Կրանից յետոյ մանղալ են դնում արկղի մէջ
կամ տաքացրած ու քաթանի մէջ փաթաթած ա-
ղիւմներ—ագուռներ:

Բացի դրանից այդ միեւնոյն արկղում ջուր էլ
են դնում, որպէսզի արկղի օդը չափից աւելի չըջո-
րանայ:

Պէտք է ուշք դարձնել որ տաքութիւնը շարու-
նակաբար միեւնոյն աստիճանի վրայ մնայ, որ ոչ
մի դէպքում չպէտք է բարձրանայ Յելսիուսի ջեր-
մաչափով 25° կամ Ռէօմիւրիով 20° -ը:

Այդ միջոցը թէ շատ հասարակ եւ թէ շատ հէշտ
է: Ծիշդ որոշել, թէ երբ պիտի սկսած ձուի կենդա-
նացնելը, չի կարելի. այդ կախուած է տեղագրու-
թիւնից. յամենայն դէպս ամենածիշդ եւ լաւ նշանը
համարուում է այն ժամանակը, երբ թթեւու պը-
տուկներն սկսում են փուք ընկնել—ուռչել, եւ երբ
պտուկները բացուելու վրայ են լինում, պէտք է
սկսել ձուի կենդանացնելը:

Շերամի մի քանի տեսակ որդը կայ: Ամենից
շատ տարածուածը սպիտակ տեսակն է, որ տալիս

է սպիտակ, դեղին կամ կանաչ բոժոժ. մքաղոյն որդը, որ քիչ է տարածուած, սպիտակ կամ դեղին բոժոժ է շինում: Միւս տեսակները թէ քիչ յայտնի եւ թէ արհամարուած են:

Շերամի որդի կեանքը կարելի է բաժանել երեք գլխաւոր շրջանի առաջինը երբ որդը, որպէս թրթուր, սկսում է հիւսել—բոժոժ շինել եւ փոփում է հարսնուկի. երկրորդ շրջանը հարսնուկն է. իսկ երրորդը՝ թիթեռը: Երբ թիթեռը կենդանանում է, բոժոժը ծակում է եւ դուրս գալիս, զուգաւորւում ու ձու դնում:

Այժմ տեսնենք շերամի որդի՝ յատկապէս այն շրջանը, երբ նա թրթուր է լինում, եւ բոլոր այն կերպարանափոխութիւնները, որ այդ ժամանակամիջոցում ենթարկւում է: Թրթուրը իւր կեանքի ընթացքում 4 անգամ է կերպարանափոխւում, այսինքն կաշին—մաշկը փոխում է, եւ մէկ անգամ էլ—հինգերորդը, երբ հարսնուկ է դառնում:

Սերմի ձուից դուրս գալը առաւօտներն է լինում: Առաջին մաշկափոխութիւնը լինում է ձուից դուրս գալուց մօտաւորապէս 6 օրից յետոյ:

Մաշկափոխութիւնը, այսինքն մէկ հասակից միւսին անցնելը, հետեւեալ երեւոյթներն են տեղի ունենում:

- 1) Որդը դադարում է ուտելուց.
- 2) Որդը գլուխը բարձրացնում է ու մնում

տեղն ու տեղը անշարժ, կամ՝ ինչպէս շերամապահներն են ասում, քնում է:

Քունը տեւում է 24—40 ժամ՝ նայելով կացարանի տաքութեան աստիճանին: Չափից աւելի տաքութիւնն արագացնում է մաշկափոխութեան գործողութիւնը:

Այդ ժամանակն անցնելուց յետոյ, որդը զարթնում է, կաշին վայր է ընկնում, որ թեփի պէս է, եւ որդն սկսում է շարժուել ու սողալ՝ թողնելով նախկին տեղի վրայ իւր հին մաշկը—կաշին:

ԱՌԱՋԻՆ ՀԱՍՍԿ

Հէնց որ ձուից դուրս գալու ժամանակ մեծ է լինում, սերմի վրայ տիւլի են քաշում այնպիսի ծակտիկներով, որոնց միջից որդերը հեշտութեամբ կարողանան դուրս գալ: Տիւլի վրայից պռիւկ—նոր բացուող տերեւ են դնում, որոնց վրայ եւ հաւաքւում են նոր դուրս եկած որդերը:

Ձուից դուրս գալը երբ վերջանում է, 6 մնխալ սերմից դուրս եկած որդերը պիտի տեղաւորուի այնպէս, որ նրանք բռնեն 5 քառակուսի արշին տարածութիւն:

Այդքան որդերին օրական 7 գրվանքայ տերեւ պիտի տալ:

Երբ որդերը հաւաքուին տերեւների վրայ, զգուշութեամբ պէտք է վերցնել այդ տերեւներն ու դնել թղթի վրայ եւ այդ թուղթը տանել շերամատուն ու տեղաւորել որդերին յատկացրած դարակների վրայ: Շերամատան տաքութեան աստիճանը պէտք է անփոփոխ լինի, այն է՝ Յելսիուսի ջերմաչափով 24° կամ Ռէօմիւրով 19°:

Որդերը մեծ քանակութեամբ ձուից դուրս են գալիս սովորաբար երկրորդ օրը:

Զանազան հասակի եւ զանազան տեսակի որդերը երբեք չպէտք է խառնել իրար հետ:

Ուշ դուրս եկած փոքրիկ որդերին շուտ-շուտ կերակրելով կարելի է երկրորդ հասակում միացնել միւսներին հետ:

Որդերի իւրաքանչիւր հասակի ժամանակամիջոցում անհրաժեշտ է, որ գոնէ երեք անգամ տեղները փոխուի — տակները մաքրուի:

Երբ միեւնոյն հասակի որդերը վերջացնում են իրանց մաշկափոխութիւնը, նրանց պէտք է ծածկել թարմ տերեւի շերտով, որի միջոցով եւ վերցնում են որդերը եւ մի այլ ազատ տեղի վրայ դնում:

Որդերին առաջին հասակում 24 ժամուայ մէջ պէտք է կերակրել 9—10 անգամ: Իսկ աւելի հասակաւորներին բաւական է 8 անգամը:

Առաջին եւ երկրորդ հասակներում որդերին պէտք է կերակրել բաւական մանր կտրտած տերեւով: Կտրելու դանակը կամ մկրատը պիտի սուր եւ բոլորովին մաքուր լինի: Կերակրելը պիտի շարունակել մինչի որդերի քնելը. ընդհակառակ պէտք է զգուշանալ կեր տալուց որդերի քնած ժամանակ մինչի բոլորի վերջնականապէս մաշկափոխութիւնը:

Այդպէս վարուելու օգուտն այն է, որ բոլոր որդերը միակերպ են զարգանում:

Երբ որդերն սկսում են քնել, այդ ժամանակ պէտք է քիչ-քիչ բայց շուտ-շուտ կերակրել:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՍԱԿ



Առաջին հասակը վերջանալուց յետոյ որդերը մէկուկէս անգամ մեծանում են, այդ պատճառով էլ պէտք է դրանց նստացնել — ցանցառացնել, տեղները փոխելով աւելի ընդարձակել:

Եթէ տեղները չփոխուի — տակները չմաքրուի, դրանից կարող է վնասակար գաղեր գոյանալ եւ վնասել որդերին:

Տաքութեան աստիճանը պէտք է նոյնը թողնել շարունակաբար:

Որդերին պէտք է առատօրէն—շուտ-շուտ կերակրել՝ մօտաւորապէս երեք ժամը մէկ անգամ:

Հինգ օրից յետոյ սկսվում է Յ-րդ մաշկափոխութիւնը:

ԵՐՐՈՐԴ ՀԱՍՍԿ



Երրորդ Հասակի որդերը պէտք է որ բռնեն 24 քառակուսի արշին տարածութիւն:

Տաքութեան աստիճանը պիտի լինի 18° ըստ Ռէօմիւրի եւ $22,5^{\circ}$ ըստ Յելսիուսի: Այդ Հասակի վերջում որդերը մօտ $2\frac{1}{2}$ փութ տերեւ պիտի ուտեն:

Այս Հասակումն է որոշվում նաեւ որդերի գոյնը, որ՝ ինչպէս ասացինք, զանազան է լինում:

Այդ ժամանակ արդէն որդերը կարող են չկտրտած, ամբողջ տերեւ ուտել: Միայն պէտք է ուշադրութիւն դարձնել որ որդերին տալիք տերեւը երբէք թաց չլինի:

Տերեւը պէտք է պահել շատ չոր եւ հով տեղ:

Որդերին տալիք տերեւը խոնաւ չպէտք է լինի. հակառակ դէպքում որդերը դեղնացաւով կը

բռնուեն կամ կըսեւանան, որոնցից մանաւանդ վերջինը, այն է՝ սեւանալը շատ վտանգաւոր է:

Ներամատան օդն անպատճառ պէտք է մաքրել օրը 3 կամ 4 անգամ, բայց հարկաւոր է զգուշանալ ընդմիջանց բամուջ, մանաւանդ վատ եղանակին: Սաստիկ փոթորիկ եղած ժամանակ, երբ անկարելի է շերամատան օդը թարմացնել օդանցներով, կարելի է շերամատանը մի քիչ ծծումբ ծխել:

Այդ Հասակի որդերին պիտի առատ կերակուր տրուի, այնպէս որ պէտք է երբէք տերեւի պակասութիւն չզգացուի:

Ներամատան մէջ, ինչպէս վերեւ ասուեց, ամեն բան պէտք է մաքուր ու խտակ պահել:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՍՍԿ




Այս Հասակի որդերի համար՝ 44 քառակուսի արշին տարածութիւն է հարկաւոր:

Որդերը այս հասակը վերջացնելուց յետոյ, մօտ $5\frac{1}{2}$ փութ տերեւ պէտք է ուտեն:

Տաքութեան աստիճանը պէտք է լինի 17° ըստ Ռէօմիւրի եւ $21,5^{\circ}$ ըստ Յելսիուսի: Պէտք է կերակրել առատօրէն եւ որքան կարելի է կանոնաւոր:

Այդ հասակից յետոյ որդերը քնում են մօտ 35 ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՍԱԿ



Հինգերորդ հասակը՝ շերամապահութեան մէջ ամենադժուար շրջանն է:

Որդերն աւելի ագահ են՝ դառնում, սկսած մաշկափոխութեան 3-րդ օրից: Մինչի շախ գնալը — ցախի վրայ բարձրանալը, այսինքն մինչի վերջին անգամ կերակրելը տեւում է 8-ից մինչեւ 9 օր: Այդ միջոցում որդերին առանձին հոգատարութիւն է պէտք: Տակնեւրը, ինչքան կարելի է, շուտ-շուտ պէտք է մաքրել, ամեն 3 ժամից յետոյ օդը թար-

մացնել եւ տաքութեան աստիճանը պահել $21,5^{\circ}$ ըստ Յելսիուսի եւ մօտ 17° ըստ Ռէօմիւրի:

Այս միջոցում պէտք է առատօրէն կերակրել որդերին եւ շերամատունն ու որդերի տակը վերին աստիճանի մաքուր պահել: Այս հասակի որդերն օրական 25 փութ տերեւ պիտի ուտեն եւ տեղաւորուած լինի 90 քառակուսի արշին տարածութեան վրայ:

Տերեւի քանակութեան մասին եղած բոլոր դիտողութիւններն արուած են՝ ի նկատի ունենալով 6 մխալ արդէն բացուած — կենդանացած սերմը:


Հինգերորդ հասակի 8-րդ օրը որդերի եղած դարաքնների վրայ շախեր կամ ցախեր պէտք է պնդացնել՝ ծղնոտից կամ այդ բանի համար մի այլ յարմար բոյսից ու առարկայից, որոնք պէտք է շատ մաքուր եւ չոր լինին, որպէսզի որդերը յարմարութիւն ունենան նրանց վրայ տեղաւորուել եւ բոժոժ շինել:

Շախերը կամ ցախերը շատ ամուր կապուած չպէտք է լինի, որպէսզի որդերի շարժուելու համար բաւականաչափ տեղ լինի: Որովհետեւ երբ տեղը նեղուածք է լինում, որդերը ջուխտակ բոժոժ շատ են շինում, որ լաւ չէ թել բաշելու համար:

Դեռ ցախ չբարձրացածներին պէտք է առանձին տեղաւորել եւ հոգ տանել վրաները:



Շերամատան տաքութեան աստիճանը պիտի

Ընկ 20° ըստ Ֆելսիուսի կամ 16° ըստ Ռեոմիւրի:
Առատօրէն կերակրելը պարտաւորական է:
Երբ բոլոր որդիքը բարձրացած լինին ցախերի
վրայ, պէտք է տակնները մաքրել:


$$\frac{1003}{10609}$$

നിറുത്തുക

Ցախ բարձրանալ պրծնելուց մի 8—10 օր անցնելուց յետոյ, կարելի է բոժոժը պատրաստ համարել թել քաշելու համար: Այս ժամանակ պէտք է զգուշութեամբ բոժոժը քաղել ցախերից, իւրաքանչիւր բոժոժի վրայից հեռացնել վերին մաշկն ու ջուկջկել, այն է՝ լաւերն առանձին դնել, ջուխտակներն առանձին, եւ այլն:



ՈՐԴԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պ ե բ ը ի ն (բժաւոր ախտ):

Պեքրինը ժառանգական, վարակող եւ տարափոխիկ բնաւորութիւն ունի: Պատկերով գիտութեան վրայ հիմնուած հետազոտութիւններս մեզ հնար են տալիս կռուել այս հիւանդութեան դէմ: Բաւական է որ մի հատ որդը հիւանդանայ պեքրինով, այնուհետեւ բոլոր մնացածները եւս կարող են վարակուել, եթէ դիպչեն պեքրինով հիւանդ որդին: Եթէ որդերի մէջ երեւացած այդ հիւանդութիւնը ժառանգական լինի, դա երեւան կրգայ երրորդ մաշկափոխութիւնից յետոյ: Վարակուած որդի կաշու տակ գոյանում են փոքրիկ, մոխրագոյն բծեր, որոնց դժուար է տեսնել առանց խոշորացոյցի, որ գոնէ 7—8 անգամ մեծացնէր: Որդի հասակի հետ մեծանում են նաեւ բծերը, այնպէս որ վերջը հասարակ աչքով էլ կարելի է ազատ տեսնել:

Այդ իսկ պատճառով բարեխիղճ սերմնապահները պարտաւոր են սերմը վերցնել այնպիսի որդերից, որոնց մէջ որեւէ հիւանդութեան ամենաանհշան հետք անգամ չի եղել:

Որպէսզի այդ նպատակին հասնուի, պէտք է սերմ պատրաստել Պատկերի ցոյց տուած ձեւով:

ՍԵԽԱՆԱԼ

Այս հիւանդութիւնը եւս թէ ժառանգական է, թէ վարակիչ, սա եւս կարող է պեքրինի պէս տարափոխիկ բնաւորութիւն ստանալ: Սեւանալ հիւանդութիւնը երեւան է գալիս 4-րդ մաշկափոխութիւնից յետոյ: Այս հիւանդութեամբ բռնուած որդերը սատկոտում են արագ, համարեա յանկարծակի: Սատկելուց յետոյ որդը սեւանում է եւ շատ շուտով հոտում՝ անախորժ հոտ արձակելով:

Սեւանալը յաճախ երեւան է գալիս տաքութեան աստիճանի խիստ փոփոխուելուց: Այդ հիւանդութիւնը կարող է պատահել նոյնպէս անմաքուր օդից:

Երբէք նոր քաղած տերեւ չպէտք է տալ որդերին, մանաւանդ այնպիսի տերեւ, որ խոնաւ հողի վրայ բուսած ծառերից է քաղուած: Այդ տեսակ տերեւը՝ նախ քան որդերին տալը, անհրաժեշտ է որ քաղելուց յետոյ մի 2 կամ 3 ժամ պահուի չոր ու հով տեղ:

Որդերին չպէտք է կերակրել նոյնպէս թաց կամ ցօղածաթաղ տերեւով:

Ֆրանսիայում մի քանի տեղ շերամապահները ձուից նոր դուրս եկած որդերին սկզբում կերակրում են այնպիսի ծառերի տերեւով, որոնց ճրկները նախընթաց տարին է լինում քշտուած—կտր-

տած. յկող սկսում են կերակրել այնպիսի տերեւով, որ քաղած լինի երկու տարի առաջ քշտած ծառերից:

Իսկ 4-րդ մաշկափոխութիւնից յետոյ ուտացնում են 3 տարի առաջ քշտած ծառերի տերեւ: Այդ կերպով պահած որդերը պնդեցողմ են լինում եւ աւելի լաւ են դիմադրում զանազան հիւանդութիւններին:

Հարկաւոր քանակութեամբ ծառեր ձեռքի տակ ունենալու համար պէտք է ամեն տարի քշտել կտրտել ունեցած բոլոր թփերին մէկ երրորդ մասի ճղները:

Բոլոր շերամապահներին խորհուրդ ենք տալիս ուշադրութեամբ եւ վստահութեամբ վերաբերուել մեր այս ցուցմունքներին, խորհուրդ ենք տալիս մանաւանդ նրանց, որոնք ցանկանում են, որ իրանք պատրաստեն սերմը:

Սեւանալը յաճախ պատահական բնաւորութիւն ունի եւ առաջանում է գլխաւորապէս որդերի լաւ չպահպանելով:

ՍՈՒՍՔԱՐԴԻՆ (քարցաւ)

Այս վտանգաւոր հիւանդութիւնը 24 ժամուայ ընթացքում սպանում է որդին: Այս հիւանդութիւնով բռնուած որդը թէեւ մի կերպ կարողա-

նում է բոժոժ շինել, բայց միշտ էլ սատկում է չկարողանալով հարսնուկ կամ թիթեռ դառնալ: Այս կերպով մուսքարդինը չի կարող ժառանգական լինիլ, բայց հաստատ է որ վարակիչ է:

Այն կացարանում, ուր երեւացել է այդ տարափոխիկ հիւանդութիւնը, 3—4 տարի այլեւս չը պէտք է որդեր պահել եւ նոյնքան ժամանակաւ միջոցն էլ չգործածել շերամատան մէջ եղած բոլոր առարկաները: Յամենայն դէպս պէտք է այդ առարկաները մաքրել ծծմբաթթուով խառնուրդով ($2\frac{1}{2}$ գրվանքայ թթու, 12 գրվանքայ ջուր) եւ այդ գործողութիւնը կրկնել տարուան ընթացքում երեք անգամ:

Հէնց որ հիւանդութեան առաջին նշանները երեւան, անհրաժեշտ է որդերին ուրիշ տեղ տանել եւ՝ որքան կարելի է տակները շուտ-շուտ մաքրել, տաքութեան աստիճանը պահել 19° ըստ Ռէոմիւրի կամ 24° ըստ Ցէլսիուսի եւ լաւ ու առատօրէն կերակրել:

Թէպէտեւ այս հիւանդութիւնը կարող է ամեն հասակում եւս երեւան գալ, սակայն դրա առաջը շատ հեշտութեամբ կարելի է առնել՝ խեղացի եւ լաւ պահպանելով որդերին, մանաւանդ ուշք դարձնել որ շերամատան մէջ ամեն ինչ մաքուր լինի:

Անպատճառ պէտք է ջոկջոկել կոկոնները, որպէսզի հարսնուկները չբացուին ու փափցնեն բոժոժը:

ՀԱՅԿԱՆԴՈՒԹԻՒՆԻ (գէրգաւ) իրաւաբարձ
մայրաքանդակ իրաւաբարձ իրաւաբարձ

Այս հիւանդութիւնը սովորաբար երեւան է
գալիս բոժոժ շինելուց մի քիչ առաջ: Որդերն սկը-
սում են դեղնել եւ կարճ միջոցում սատկոտում են:
Որդերին դեղնացաւից ազատ պահելու համար
պէտք է զգուշանալ շատ հիւթալի տերեւ տալուց,
մանաւանդ հիւթալի տերեւ չտալ 4-րդ մաշկափո-
խութիւնից յետոյ:

ՅԵՏԱՄՆԱՅ, ՓԱՅԼՈՒՆԲ ԵՒ ԿԱՐՃԼԻԿ ՈՐԴԵՐ

Միեւնոյն դարաքի վրայ յաճախ նկատելի է
զանազան մեծութեան որդեր: Այդ բանը առանձ-
նապէս նկատելի է լինում այնտեղ, ուր որդերը
շատ խիտ են, տեղերը սաստիկ նեղուածք: Այն բա-
նին օգնելու համար հարկաւոր է նօսրացնել—սեյ-
րակացնել եւ որքան կարելի է լաւ ու կանոնաւոր
կերակրել: Այդ զգուշութիւններն բաւական են, որ-
պէսզի չպատահին ոչ յետամնացներ եւ ոչ փայլուն-
քաւորներ:

Այս հիւանդութիւններն առաջանում են վատ
սնունդից:

Կարճիկ որդերն այն որդերն են, որոնք հար-
կաւոր րոպէին՝ շախի անյարմարութիւնից թէ մի

այլ պատճառից չեն կարողանում իրանց համար մի
յարմար տեղ գտնել եւ բոժոժ շինել:

Այդ տեսակ որդերը պահպանում են իրանց
թափանցկութիւնը, բերաններից մետաքսահիւթը թա-
փում, դեռ բոժոժ չլինած հարսնուկ դառնում
կամ թէ չէ սատկում: Այդ բանից պարզ երեւում
է որ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ իւր
ժամանակին շախ դուռ բոժոժ շինելու համար:

Նկատուի՝ որոնք վերաբերում են ոս-
տերի վրայ պահուող որդերին:

Արեւելքում մեր արած ճանապարհորդութեան
ժամանակ մենք առանձին ուշադրութիւն դարձրինք
այն բանի վրայ որ տեղական շերամապահները որ-
դերին պահում էին ոստերի կամ ճիւղերի վրայ:

Այդ շերամապահներից շատերը՝ որդեր պահելու
համար առանձին տեղ չունին: Որդերին պահում
են կամ իրանց կացած սենեակում կամ թէ չէ
չարդախներում, որոնց տանիքը ծածկուած է ծղնո-
տով, յատկապէս այդ նպատակի համար են պատ-
րաստում:

50—60 քառակուսի արշին տարածութիւն ու-
նեցող տեղը բաւական է համարվում 6 մսխալ սերմի
համար:

Գետնից $\frac{1}{2}$ արշին բարձրութեամբ տախտեր
են շինում (սովորաբար եղեգնից) եւ դրանց վրայ

էլ տեղաւորում որդերին՝ գլխաւորապէս 2-րդ մաշկափոխութիւնից յետոյ:

Այդ ժամանակից որդերին կերակրում են օրը միայն 4 անգամ:

Կերակուրը տրվում է ուղղակի ամբողջ ճղնէրով, որ զգուշութեամբ փռում են տախտերի վրայ:

Բայց որովհետեւ Թուրքեստանի շերամապահները գտնվում են այնպիսի երկրում, որ շատ աւելի յարմարութիւններ ունի շերամապահութեան համար, այդ իսկ պատճառով նրանք կարող են տաքութեան աստիճանի վրայ այնքան էլ ուշք չդարձնել, այլ միայն լաւ պահպանել որդերը բաւականաչափ բարձր դիրք ունեցող կացարանում՝ նայելով որդերի հասակին:

Անկասկած է որ այդ միջոցը շատ հասարակ է եւ չափից դուրս պարզ, քան թէ վերելի մեր ցոյց տուածը, բայց այդպիսինի արդիւնքը չափազանց վատ է: Եթէ այդ կերպով քիչ աշխատանք է գործ դրվում, դրա համեմատ էլ, մեծ մասամբ, արդիւնքը շատ աննշան է լինում:

ՑԵԼԻԻԼԵՐ ՍԵՐՄԸ

Եթէ շերամապահը կամենում է որ ինքը սերմ պատրաստի, դրա համար նա պէտք է ջոկի ամենալաւնոր բոժոժները, այն էլ այն տեսակ բոժոժ-

այդ բնագործ (սկզբնական ցանկութեամբ) նշանակում

ներից, որոնց շինող որդերի մէջ ամբողջ պահպանման ընթացքում որեւէ հիւանդութիւն չի երեւցել: Բացի դրանից սերմի համար ջոկած բոժոժները պէտք է լինին միեւնոյն տեսակի եւ միեւնոյն գոյնի:

Այստեղ մենք մանրամասն չենք պատմիլ այն անյարմարութիւնների մասին, որ յառաջանում են տեսակները: Սեր կարծիքն այն է, որ ամեն մի տեսակի որդերը պիտի առանձին պահուին:

Սերմի համար անպէտք են թէ ջուխտակները եւ թէ թոյլ ու անկանոն շինուած բոժոժները:

Երբ բոժոժներն ընտրուած են վերել ցոյց տուած ձեւով, պէտք է այդ բոժոժները թելի վրայ շարել կամ կախ տալ մի զով տեղ:

Մօտաւորապէս երկու շաբաթից յետոյ երեւում են թիթեռները, որոնք առաւօտներն են դուրս գալիս առհասարակ: Այդ միջոցին պէտք է հսկել, որպէսի կարելի լինի դէն ածել այն բոյոր թիթեռները, որոնք քիչ թէ շատ կասկածելի են երեւում:

Թիթեռները հէնց որ բոժոժից դուրս են գալիս, սկսում են զուգաւորուել, որից յետոյ ամեն մի զոյգը զգուշութեամբ պէտք է վերցնել գգել առանձին քսակի մէջ, որի բերանը պիտի կապուի, որպէսզի թիթեռները միջից դուրս չգան:


Այդ քսակները պէտք է այնպէս լինի կարուած որ սերմը ցրիւ չգայ, եւ այն մեծութեամբ, որ թիթեռը ձու ածելիս ազատ կարողանայ շարժուիլ:

այդ պատիւ նշանակում ցանկութեամբ յետոյ յետոյ

Քսակները պէտք է կարել թեթեւ ու թափանցիկ կտորից, որպէս են կիսէինը, մառախուս եւ այլն: Քսակի մեծութիւնը 2 կամ 3 վերջոյ պիտի լինի: Քսակները պիտի կախ տալ մի զոյլ եւ ընդարձակ տեղ:

ՄԱՆՐԱԳԻՏԱԿՈՎ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Սերմը մանրագիտակով քննողը պէտք է ծանօթ լինի քանի մի տեղեկութիւնների եւ կարողանայ ճանաչել շերամի որդի զանազան հիւանդութիւնների նշանները: Պէտք է գիտենալ նոյնպէս մանրագիտակի գործածելը: Սերմը կարելի է քննել տարուայ ամեն եղանակին, միայն թէ այդ պիտի լինի սերմը կենդանանալուց վաղ: Վերջին ժամանակը կարելի է համարել մարտ ամիսը: Քրտակների պատերից սերմը հեռացնելու համար հետեւեալ կերպով են վարվում. — քսակը դնում են ջրի մէջ, ապա ձեռքով կամ բռնով դանակով զգուշութեամբ բերում կտորի վրա-



յից սերմը: Յետոյ սերմը լուանում են եւ ստուերի տակ ցամաքացնում ու տանում այն կացարանը, ուր պիտի սերմը պահուի ձմեռը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ի վերջոյ պէտք է ասենք, որ այս համառօտ ձեռնարկը կազմելիս մեր նպատակն է եղել քանի մի գործնական, պարզ եւ հշտ գործադրելի խորհուրդներ տալ այն ամենքին, որոնք կը ցանկանան շերամապահութեամբ պարապել:

Մեր բոլոր ասածներից պարզ երեւում է, որ թուրքեստանում շերամապահութիւնը աւելի յաջողակ պայմանների մէջ է կատարվում, միւսների հիմնաւոր միջոցներ գործադրելով: Սակայն ամենաջնջին անհոգութիւնն իսկ կարող է պատճառ լինել ապագայ բոլոր հոգսերի ու աշխատանքի կորստեան: Խորհուրդ ենք տալիս առանձնապէս զգուշանալ տաքութեան աստիճանի խիստ փոփոխութիւնից:

Ինչպէս վերեւն էլ ասուեց՝ տաքութեան աստիճանի արագ ցածանալը, կամ խոնավութիւնը ամենավատ հետեւանք կարող են ունենալ եւ ոչնչացնել բոլոր սպասելիք արդիւնքը:

Հիւանդութիւնների դէմ գործադրուած միջոցները, որոնց մասին խօսեցինք, կարող են միայն

նախագգուշացնել, բայց ոչ բժշկել: Յաջողութեան գլխաւոր պայմանը, շեշտում ենք, որդերին կանոնաւոր եւ խելացի կերպով պահելու մէջն է: Նոյն պէս պիտի աշխատած, որքան կարելի է, պահելը շուտ սկսել, որովհետեւ որքան ուշանայ, այնքան էլ որդերը պիտի զանազան խոչնդոտների հանդիպին: Երամապահութեան ժամանակամիջոցը որքան կարճ է եւ քիչ, հետեւապէս նրա վրայ աւելի քիչ ժամանակ ու աշխատանք է գործ դրուած, այնքան եւս, ասել է, թէ ձեռնտու եւ թէ արդիւնավէտ կը լինի:

Առհասարակ գիւղատնտեսութեան այս ճիւղը ամենից արդիւնաւէտն է համարվում՝ համեմատելով միւս ճիւղերի հետ, որոնց վրայ գործ դրած դրամագլխից տոկոս ստանալու համար պիտի պատել երկար տարիներ եւ պատրաստի լինել ամեն տեսակ անյաջողութիւնների:

Այնպիսի տեղերում, ուր հողն էլ ընդհանրապէս թանգ է, շերամապահութիւնը կարող էր մեծամեծ օգուտներ տալ եւ հարստացնել Թուրքիտանի՝ ուրեմն եւ բոլոր երկրի առեւտուրն ու արդիւնաբերութիւնը:

Պատկեր 1-ին:

Է Տ Ա Ժ Ե Ր Կ Ա

Յարմար էտաժերկանների չափսը հետեւեալը պիտի լինի. դարաքների միմեանցից հեռաւորութեան բարձրութիւնը պիտի լինի $\frac{3}{4}$ արշին, իսկ դարաքի լայնութիւնը մէկուկէս արշին:

Պատկեր 2-րդ:

Թ Թ Ե Ն Ի Ն Ե Ր

Թիթենին՝ երբ դեռ ջահէլ է սովորաբար քըշտում են — ճղները կտրում, երկրից 3 արշին բարձրութիւնից՝ տալով նրան այն ձեւը, որ յառաջ է բերուած մեր պատկերի մէջ:

Պատկեր 3-րդ:

Բ Ա Ռ Ա Ն Կ Ի Ի Ն

Սերմ պահելու համար է՝ փայտից է լինում եւ կախ է տրվում առաստաղից:



ՅՈՒՆԻ-1 դժբախտ

Ա Մ Դ Շ Ե Ա Շ Դ

յուսկանք՝ զանազան զգացմունքներով համարձակ
-առնալով՝ ընդամենին զգացմունքներով համարձակ
-առնալով՝ ընդամենին զգացմունքներով համարձակ

ԳՂ-Ե դժբախտ

Դ Շ Դ Դ Շ Դ Դ


-չնչ, զանազան զգացմունքներով համարձակ
-չնչ, զանազան զգացմունքներով համարձակ
-չնչ, զանազան զգացմունքներով համարձակ

ԳՂ-Ե դժբախտ


Դ Դ Դ Դ Դ Դ Դ Դ

Կանգնելով ի իրար հանդիմանում, իրար հանդիմանում
Կանգնելով ի իրար հանդիմանում, իրար հանդիմանում

Օրինակ 1




Օրինակ 2




Օրինակ 3

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ
7/31 1922
ԵՐԵՎԱՆ
ՄԱՐԿԱ Ի ՍՏԱՆԻ ՍՆՎԱՆԻ

Objeet 1



Objeet 8



Objeet 2





2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0082378

